



ՀՀ, Երևան 0014, Պ.Սևակ 8; Հեռ.՝ (374 60) 60 70 80; info@tmaudit.am, www.tmaudit.am

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Միթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Միթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2018թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՓՄԿ-ների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԻ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խաղախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք

բերված աուդիտորական ապացույցների վրա: Մակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությունը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն



Անուշ Չիթչյան
Առաջադրանքի ղեկավար



22 մարտի, 2019թ.,
ք. Երևան, Պ.Սևակ 8

«Միթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Մ000 դրամ	Ծանոթ.	31/12/18	31/12/17
Ակտիվ			
Հիմնական միջոցներ	4	319	-
Հետաձգված հարկային ակտիվ		87	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		406	-
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		99	
Ընթացիկ ֆինանսական ակտիվներ	5	92,112	
Դրամական միջոցներ	6	69,792	4,905
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		162,003	4,905
Ընդամենը ակտիվներ		162,409	4,905
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Զբաղիսված շահույթ		489	-
Ընդամենը սեփական կապիտալ		489	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	319	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		319	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	8	3,803	-
Շահութահարկի գծով պարտավորություն		168	-
Այլ հարկերի և պարտ.վճարների գծով պարտավորություն	9	475	176
Աշխ.-ի և այլ կարճ.հատուցումների գծով պարտավորություն		439	1,288
Եկամուտներին վերաբերող շնորհներ	7	156,714	3,441
Այլ ընթացիկ պարտավորություններ		2	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		161,601	4,905
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		162,409	4,905

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Է. Դեմիրճյան

«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ

*«Միթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի
Ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար*

‘000 դրամ

	Ծանոթ.	2018	2017
Դրամաշնորհներից եկամուտ		71,721	2,582
Դրամաշնորհներից ծախս		(65,386)	(1,544)
Վարչական ծախսեր		(5,906)	(1,030)
Այլ ծախսեր		(458)	(6)
Գործառնական գործունեությունից վնաս (շահույթ)		(29)	2
Ֆինանսական եկամուտ		838	-
Փոխարժեքային տարբերությունից վնաս (օգուտ)		(240)	(2)
Շահույթ մինչև հարկումը		569	-
Շահութահարկի գծով ծախս	10	(80)	-
Տարվա շահույթ		489	-
Զբաղիված շահույթ տարվա սկզբի դրությամբ		-	-
Զբաղիված շահույթ տարվա վերջի դրությամբ		489	-

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Է. Դեմիրճյան

«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ

*«Միթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար*

<i>Միլիոն</i>	<i>Ծանոթ.</i>	<i>2018</i>	<i>2017</i>
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
դրամաշնորհներից մուտքեր		223,762	6,023
վճարումներ շահառուներին		(37,332)	(165)
վճարումներ մատակարարներին		(17,649)	-
վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից		(11,717)	(1,363)
այլ		(94)	(41)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր		156,970	4,454
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
տոկոսների ստացումից		739	-
ավանդների տրամադրումից		(92,112)	-
հիմնական միջոցների ձեռքբերումից	4	(470)	-
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր		(91,843)	-
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր			
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր		-	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		65,127	4,454
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ		(240)	(2)
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի		4,905	453
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի		69,792	4,905

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Է. Դեմիրճյան

«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ